

Արձանագրություն N3

2021թ. մայիսի 25-ին տեղի ունեցավ 10-րդ Բ դասարանի ծնողական խորհրդի նիստը՝ որին մասնակցում էին բոլոր ծնողները, դասղեկ Լ. Աղաքարյանը, տնօրեն Ն. Բաբայանը:

Օրակարգում՝

1. Ռազմամարզական փորձնական ճամբարի մասնակցության հարցը:
2. Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:
3. Ընթացիկ հարցեր, կարգապահություն, առաջադիմություն:

1. Լսեցին .—Ռազմամարզական փորձնական ճամբարի մասնակցության հարցը

Տնօրեն Ն. Բաբայանը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության նոր ծրագիրը՝ կապված ռազմամարզական փորձնական ճամբարի հետ: Նա նշեց, որ մեր դպրոցը ընտրվել է այս ծրագրին մասնակցելու համար , և կարևոր է ապահովել մեր աշակերտների ներկայությունը, քանի որ հետագայում ճամբարը դառնալու է ուսումնական գործընթացի պարտադիր մի մասը: Իր խոսքում Ն. Բաբայանը ասաց, որ նախապես աշակերտներ էին ընտրվել 11-րդ դասարանից , սակայն մոտեցումը փոխվել է, ճամբար են մեկնելու 21-22 ուստարվա 11-րդ դասարանցիները:

Որոշեցին, որ դասարանից կմասնակցեն հետևյալ աշակերտները՝

1. Գալստյան Արսեն
2. Մկրտչյան Արսեն
3. Պետրոսյան Վահե
4. Մաթևոսյան Նարեկ
5. Սուքիասյան Արման
6. Պետրոսյան Անի
7. Բաղայան Լուսինե
8. Բաղայան Մերի
9. Թարոյան Իրինա
10. Խաչատրյան Անուշ
11. Ազիզբեկյան Անի
12. Սարգսյան Ղևոնդ
13. Այվազյան Նաիրի

2.Լսեցին.- էրսկուրսիայի կազմակերպման հարցը:

Դասղեկ Լ. Աղաբաբյանը իր խոսքում նշեց, որ քանի որ մոտենում է հունիսի 1-ը, երեխաները առաջարկել են այդ օրը միասին անցկացնել: Նրանք առաջարկել են օրն անցկացնել Աբովյանում, գնալ եկեղեցի և օրն ավարտել սրճարանում: Ծնողները ողջունեցին դասղեկի և երեխաների նախաձեռնությունը:

Որոշեցին

Հավաքել 2000-ական դրամ և այդ գումարի մեջ տեղավորել բոլոր ծախսերը:

Ժողովի նախագահ՝

Քարտուղար՝



Ար. Հարությունյան

Ն. Ավագյան